№ 144 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 4 1901 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 4 № 144

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջիկայ հանդէսի առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խառն ներկայացում. Մատենագրութիւն. Բորենու արշաւանքը. Նամակ Հին-Նախիջեւանի գաւառից. Նամակ Շուլավէրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Աւստրիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ճաշերի ծափերի աշխարհից.

## ԱՌԱՋԻԿԱՅ ՀԱՆԴԷՍԻ ԱՌԻԹՈՎ

Առաջիկայ աշնանը, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, պէտք է հանդիսաւոր կերպով տօնվի Վրաստանի Ռուսաստանի հետ միացման հարիւրամեակը։ Այդ միացումը, որ վերջ դրեց Վրաստանում տիրող խառնաշփոթ քաղաքական վիճակին, հանգստացրեց երկիրը արտաքին արշաւանքների սպառնալիքներից, սկիզբ դարձաւ խաղաղ կուլտուրական կեանքի բոլոր այն ազգերի և ցեղերի համար, որոնք ապրում էին Վրաստանի սահմաններում, նրանց թւում և հայերի համար։

Վրաստանում եղած հայութիւնը ազատ շունչ քաշեց և սկսեց հոգ տանել իր զաւակների կրթութեան և իր տնտեսական կեանքի զարգացման վրա։ Առաջադիմութիւնը, ճիշդ է, կատարվում էր դանդաղ կերպով, բայց նա ստացել էր կանոնաւոր ձև և տարէց-տարի ընդարձակւում էր իր ծաւալը։ Վրաստանում եղած հայերը սկսեցին խորհել կրթական և այլ կուլտուրական հաստատութիւնների հիմնարկութեան մասին։ Առաջին բարեկարգ դպրոցները, առաջին բեմական ներկայացումները, առաջին տպագրական խօսքը գոյութիւն ստացան Վրաստանի մայրաքաղաքում և յետոյ տարածվեցին մեծ ու փոքր չափով Անդրկովկասի զանազան մասերում։

Ներկայ հարիւրամեակը մեր նորագոյն կեանքի հարիւրամեակն է։ Մենք կապված ենք անմիջական և բնական կապով այն փոփոխութեան հետ, որ կատարվեց Անդրկովկասում, երբ Ռուսաստանը նրան միացրեց իր հետ և տարածեց նրա վրա իր իշխանութիւնը։

Անկասկած շատ հետաքրքրական կը լինէր գրել հայերի կեանքի մէջ եղած փոփոխութիւնների պատմութիւնը այն օրից, երբ Անդրկովկասը մտաւ Ռուսաստանի հովանաւորութեան տակ։ Այդպիսի մի պատմութիւն այժմ հեշտ կարելի է կազմել, որովհետև դեռ շատ կան մեր երկրում մարդիկ, որոնք յիշում են մեր աշխարհում տեղի ունեցած դէպքերը։ Մի և նոյն ժամանակ պէտք է աչքի առաջ ունենալ և այն հանգամանքը, որ մեր ներկայ կեանքում շատ տեղ դեռ պահպանվել են հին կարգերը իրանց առանձնայատկութիւններով և կարող են տալ գաղափար մեր նորագոյն անցեալի մասին։

Ցաւելով պէտք է յայտնել, որ առաջիկայ հարիւրամեակը չէ դարձել հայերի համար առիթ ուսումնասիրութիւններ կատարելու մեր նորագոյն կեանքի շրջանի մասին։ Իսկ դէպքը յարմար էր։ Շատ ցանկալի է, որ այդպիսի մի աշխատութիւն կազմելու համար ժողովվէր մի որ և է գումար հաւաքական եղանակով, կամ ունեւորներից մէկը հոգար ծախքերը՝ նշանակելով այդպիսի մի աշխատութեան համար մրցանակ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԽԱՌՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ուրբաթ, ամսիս 29-ին, վրաց ազնուականների թատրոնում կայացաւ խառն ներկայացում ռուսերէն, հայերէն և վրացերէն լեզուներով ժողովրդական թատրոնի օգտին, նոյն բեմի բոլոր սեկցիաների նախաձեռնութեամբ։ Ըստ երեւոյթին պէտք էր, որ թատրոնը ամբողջովին լիքը լինէր, պատճառ որ ներկայացումը կազմած էր հետաքրքիր երեք ազգութիւնների համար էլ, բայց ցաւօք սրտի պէտք է արձանագրել, որ թատրոնը գրաւել էր շատ փոքրաթիւ հասարակութիւն։

Խաղացին ռուսերէն լեզուով Օստրովսկու—«Въ чужомъ пиру похмѣлье», վրացերէն մի փոքրիկ վօդվիլ և «Կրոթ-կրոթ» վօդ. 1 գործ. հեղ. Մաղաթեանի հայոց սեկցիայի կողմից. վերջինի մէջ պ. Ա. Մանդինեան չը կարողացաւ տալ իսկական զինուորի տիպը՝ ներկայացնելով շատ ծեր (инвалидъ), մինչդեռ նա երիտասարդ է և ունի սիրեկան։ Ընդհանրապէս խաղը բոլոր լեզուներով լաւ անցաւ, ի հարկէ այն չափով, որքան կարող են տալ սիրողները։ Մենք չենք կարող խստապահանջ լինել, որովհետև այդ գործին ծառայողները առաջին տեղը դնում են ժողովրդին ծառայելը, որքան որ իրանց ուժերը ներում են։ Ներկայացման վերջը կայացաւ համերգ պ. Գալեվի ղեկավարութեամբ։

Զարմանում ենք, թէ ինչ կարիք կար վրացոց սեկցիայի կողմից ընտրել այնպիսի մի պիէս, որտեղ բացասական տիպերը հայեր են. գոնէ այս դէպքում այդ աւանդական տգեղ երեւոյթը պէտք է տեղի չունենար... Մեր այս նկատողութեանը թատրոնում մեզ պատասխանեցին, որ վրացոց համարեա բոլոր պիէսներում բացասական տիպերը հայեր են։ Եթէ այդպէս է, շատ ու շատ ցաւալի է։ Միթէ դեռ պէտք է բացատրել, որ կեղտոտ տիպեր ամեն տեղ և ամեն ազգութեան մէջ էլ կան։

Կ. Շ.

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

„Anatolische Skizzen". Von Alfred Körte (96 S.).

Այս փոքրիկ գիրքն իր մէջ պարունակում է ուղիղ 11 անկապ յօդուածներ, որոնք զանազան ժամանակներ գրված ու հրատարակված են եղել «Tägliche Bundschau» թերթում։

Ամբողջ գրքի նիւթն է կազմում Փոքր Ասիան, նրա մի քանի երկաթուղիներն ու ընթացիկ կեանքից վերցրած հարցերը։ Սակայն բոլոր յօդուածներն էլ գրված են թռուցիկ կերպով եւ միանգամայն զուրկ են անաչառութիւնից։

Հեղինակը միշտ առատ գովասանքներ է շռայլում, երբ խօսքը թիւրքերին կամ նրանց բարեկամ գերմանացիներին է վերաբերվում եւ անպատկառ զրպարտանքներ է թափում, երբ խօսքը հայերի, յոյների կամ հրէաների մասին է։

Այսպէս, օրինակ, «Die Armenier in Anatolien» (Հայերն Անատոլիայում) գլխում նա աշխատում է համոզել, թէ հայկական կոտորածները առաջ են եկել այն պատճառով, որ հայերը վաշխառու են, որ նրանք միշտ կեղեքում են թիւրքերին եւ այլն։ «Մէկ յոյնը երկու հրէայի կը խաբէ, իսկ մէկ հայը—երկու յոյնի», ասում է նա։ Բայց ինչ ձեւով է հայերի վատութիւնն ապացուցանել աշխատում...

Ահա նմուշներ.

«Թիւրքերը քիչ են աշխատում եւ սիրում են «քէֆը», իսկ հայերը միշտ աշխատում, միշտ տքնում են, որովհետեւ ագահ ու փողասէր են... Հայերն առանց ամաչելու թողնում են իրանց ընտանիքը եւ գնում պանդխտութիւն դարձեալ փողասիրութիւնից... Պոլսի հայ համայնքներից շատերը չեն ծխում, որ շատ փող հաւաքեն... եւ այլն եւ այլն...

Բարեբաղդաբար, հեղինակի այդ տեսակ յարձակումները այնքան անտրամաբանօրէն են գրված, որ նոյն իսկ գործից անտեղեակ, բայց մտածող ընթերցողն իսկոյն կը հասկանայ, թէ պ. Կէօրտէն կամ ընդհարում է ունեցել հայերի հետ, կամ սուլթան Համիդի ոսկիներից է ճաշակել։

Ե. Թ.

## ԲՈՐԵՆՈՒ ԱՐՇԱՒԱՆՔԸ

(Նամակ Սամաղարից)

Ահա 2—3 տարի է, որ ամառ ժամանակները մեզանում յայտնվում է բորենի կոչված գազանը, որը իր յափշտակութիւններով սարսափ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՃԱՇԵՐԻ, ԾԱՓԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ

(Նամակ գաւառից)

Մանր եւ անմխիթար է գաւառում կեանքը—ձանձրալի, միակերպ հասարակական կեանք. չը կան շահեր, գործունէութիւն, ամեն ինչ քնած է, թմրած. մերթ-մերթ միայն այդ քունը ընդհատվում է ուտելու, խմելու, նոյն իսկ ճառելու համար եւ նորից բոլորին պատում է հին թմրութիւնը, ծանօթ, շատ ծանօթ թմրութիւնը...

Սա գաւառի ընդհանուր տրամադրութիւնն է։ Բայց այստեղ եւ այնտեղ, շնորհիւ մի քանի ընտրեալների, զարգանում են անկուշտ ախորժակներ. ընդհանուր քնէածութիւնը սրատես աչքերի համար ամենայարմար մթնոլորտն է. եւ ահա սկսվում է գաւառական թալանը. ճանկերը սրվում են, մտրակը շարժվում, եւ ամենամեծ հրէշը—ագահութիւնը—սկսում է իր արշաւանքը՝ տնից-տուն, գրպանից-գրպան, շրջանից-շրջան,—մի խօսքով, հունձը մեծ է, մշակները, թէեւ քիչ, բայց ճարպիկ։—Աշխարհի մարդիկ են սրանք...

Դատաստանական դահլիճը օր-օրի վրա մէկ-մէկ հրապարակ է հանում այդպիսիներին եւ մենք հանդիսատես ենք լինում կեանքի դերասանների վերջին դերերին։—Այնտեղ բացվում է կեանքի դրաման իր բոլոր գործողութիւններով, պատկերներով. դեկորացիաները բնական են, գործող անձինք՝ հարուստ ընդունակութիւններով, իսկ հերոսը այստեղ գեղեցիկ է, որպէս ապաշխարող, զրպարտեալ, անմեղ զոհ, մի խօսքով, վարագոյրը իջնում է եւ կեանքի բեմը ընդմիշտ զրկվում է իսկական հերոսից... Բայց նրա տեղը բաց չէ մնում, շարքը լրանում է նորերով. երկար շարք...

Դատաստանական դահլիճը եւ մեղադրեալի նստարանները ժլատ են այդպիսի բերքերով, բայց հօ տալիս են. լաւ է մի բան տալ, քան ոչինչ...

Հերոսների այս անվերջ շարքի մէջ բացվում է մի հազւագիւտ պատկեր տիպերի, դէմքերի, արհեստի, դիրքի, մանաւանդ հունարի։ Ո՞վ չը կայ այստեղ. նախկին ուղտապան-միլիօնատէր, գրագիր-ստրկան, վաշխառու-փաստաբան, իդէալիստ-բժիշկ, ազգասէր-դատաւոր, ապուշ-գործարանատէր, տոհմական-ազնուական, փախստական-ձայնաւոր եւ այլն եւ այլն եւ այլն։ Կեանքի այս կալէյդօսկօպը հարուստ է գոյներով...

Մի խօսքով, դիւթական գաւազանի հարուածով ձեր առաջ վերակենդանանում են երեսնական, քառասնական թւականները. Գօգօլի հերոսները ձեզ ճանապարհ չեն տալիս. գործում են ու գործում, ամենքը ծանօթ դէմքեր են, շատ ծանօթ. փոխված է միայն տարազը, միրուքի եւ մազերի սանդրվածքը։

Ահա թէ ինչու, երբ դուք կեանքում հանդիպում էք բարեխիղճ բժշկի, ազնիւ փաստաբանի, սրտացաւ պաշտօնեայի, խղճով հարուստի, բարեսիրտ իշխանի, ձեռքերիդ վրա էք բարձրացնում դրանց, փառաբանութեան բուրվառը լցնում էք գովասանքի խունկով, հոգիներդ երկիւղածութեամբ, աչքերդ լցվում են երախտագիտութեան արցունքով, իսկ երեսներիդ խաղում է մանկական անարատ ժպիտը եւ «Ովսաննա»-ներով պատրաստ էք ծունկ խոնարհել դրանց առաջ...

Դեռ չեմ կարողացել ինձ պարզել մեծութեան գաղտնիքը. ինչ բան է մեծութիւնը. արդեօք մենք ենք գաճաճ, թզուկ, որ սովորական մարդը մեծ է երեւում, թէ՝ լաւութիւնը այնքան քչացել, աղքատացել է, որ դրան հանդիպելիս ակամայ խոշորացոյցի ենք դիմում։ Ինչ եւ է։ Եթէ կայ այդ մեծութիւնը—լինի նա իմ փոքրութեան զուգադիպ, թէ՝ իմ թոյլ աչքերիս պտուղ—եթէ նա՝ այդ մեծութիւնը կայ, ես կոչում եմ նրան. կոչում եմ, եթէ նա օգնում է ինձ, եղբօրս, հարեւանիս, անպաշտպան բարեկամիս. ես կոչում եմ նրան, եթէ նա բռնում է ընկածի, հալածվածի ձեռքից եւ ոտքի է կանգնեցնում. ես կոչում եմ նրան, եթէ նա բռունցքի հարուածով գետին է գլորում աւազակին, ապտակում անզգամին, պատռում անամօթի փայլուն դիմակը։ Այո, նա մեծ է. նա մեծ է նոյն իսկ, թէ ոչինչ չէ անում. բաւական է միայն, որ նա անկեղծ բարկանայ, զայրանայ, անկեղծ արտասվէ, անկեղծ ձգտի բարին տեսնել եւ բարին գործելու լոկ ձըգտում ցոյց տայ. մենք դրանով էլ գոհ ենք. մեր խունկը դրա համար էլ կը ծխայ—միայն չմտ, մի քիչ շատ դրանցից, այդ փոքր մեծերից։ Չէ որ իսկական մեծերին սպասելով համբերութիւններս հատաւ, տեսողութիւններս նուազեց... Թող գան,—մենք դրանց համար էլ ունենք անկեղծ «Ովսաննա»-ներ։

Համաձայնեցէք, որ լաւ է մի բան—քան ոչինչ։

Լաւ է մի բան—քան ոչինչ։

Բայց ինչ կասես, որ հարստահարված գաղափարների, սնանկացած իդէալների մեր դարում դիրքը, պաշտօնը, հարստութիւնը, եւ նոյն իսկ կոկած ձեւերը, ուռած փորը, հաստ ճարպածալ վիզը եւ ձայնի խրոխտ երեւէջը բացասական «գործերի» ծանրութիւնից, շարէշար յանցանքների կուտակումից փառաբանութեան ամբիոն է ստեղծում իր համար, որտեղից տիրոջ հայացքը—լի ինքնագոհութեան տենչով—անթառամ դափնիներ է փնտռում ամբոխի ձեռքերում եւ ծափահարութեան դըղրդոցին ծարաւ ականջը այս ու այն կողմն է լարվում...

Հերոսը—լինի նա բժիշկ, պաշտօնեայ, իշխանաւոր, լինի նա դատարկ զողանջող փող—միայն պղնձի կուրացնող փայլով, տասնեակ տարիներ լուրջ խուզարկութիւն է կատարել համբերատար գիւղացու գրպաններում, քունջ ու պուճախում, նոյն իսկ նորապսակների խըշխըշան մետաքսեայ միակ վերմակը աւելորդ զեղխութիւն է նկատվել իշխանաւորի կողմից եւ անմխիթար կեանքի այդ միակ զարդը տեղափոխվել է գիւղացու հոտած ծալքատեղից իշխանաւորի կամոդը...

Հա՛, հա՛, հա՛... երեք պուդ ծանրոցով գաւառ մտած պաշտօնեան, մի քանի տարի գործելուց յետոյ, մի շարք սայլերի գնացքով ծանրաբեռնված թողնում է իր պաշտօնատեղին... Հազարներ է տանում նա իր հետ, տասնեակ խալիներ, տասնեակ փռուածքներ, պէս-պէս գործուածքներ... իսկ «մնաք բարեւ» ճառում, ի պատասխան ներբողների, յուզված ձայնով «ներեցէք, որ իմ համեստ (!?) գործունէութեանը այդքան մեծ նշանակութիւն էք տուել»-ով է վերջացնում...

Ախ, սուրբ անմեղութիւն...

Իսկ մենք գովում ենք ու գովում, խմում ենք ու գովում, գովում ենք ու խմում...

Ասացէք, խնդրեմ, իրաւունք ունէք դուք այսպիսի պայմաններում համեստացնել ձեր պահանջը դէպի լաւը։ Ի հարկէ, այո։

Դուք փոքրանում էք ակամայ եւ ձեր առջեւ փոքր լաւը խոշորանում է, առաքինութեան փայլով պսպղում եւ ստանում մի առանձին գրաւչութիւն, ու բացականչում էք.

«Արի մեզ մօտ, լաւ, որքան եւ դու փոքր ես, մենք քեզ գրկաբաց կընդունենք—տես, որքան մենք փոքր ենք, որքան փոքր...»

Այո, լաւ է մի բան, մի փոքր լաւ բան, քան ոչինչ։

Ո՛հ, որքա՛ն ուժեղ են ոչինչները...

Սալման

եւ երկիւղ է գցել գրեթէ մեր ամբողջ գաւառում։ Տեղացի ժողովուրդը այդ գազանին «մարդակեր» կամ «մարդագայլ» անունն է տալիս, նրա մարդ ուտելու պատճառով։

Անցեալ շաբթին յիշեալ գազանը, կէս գիշերին յայտնվելով Գրամբայ հայ եւ Թուրքաբնակ գիւղում, ծածուկ մօտենալով կտուրի վրա քնած մի Թուրք ընտանիքի, մարդու եւ կնոջ արանքից քաշում, տանում է 4—5 տարեկան երեխային։ Ծնողները, յանկարծ տեսնելով, որ մանուկը չը կայ, սկսում են հաւար կանչել, որով գիւղացիները հաւաքվելով, հազիւ կարողանում են գիւղից դէպի հարաւ, մէկ վերստ հեռաւորութեամբ միայն հետքը գտնել։ Գազանը խեղճին ամբողջովին կերել էր։

Մի քանի օրից յետոյ, բորենին մտնում է Քիւրաքեան կոչված Թուրքաբնակ գիւղը. նկատում է կտուրի վրա քնած մի երիտասարդի։ Բարձրանում է դէպի նա, կոկորդից բռնում եւ կտուրից ցած գցում փողոց, ինքն էլ հետեւում նրան։ Թուրքը ուշքի գալով սկսում է մաքառել իր հզօր թշնամու հետ, բռունցքով հարուածելով նրան։ Այդ թփթփոցին հարեւանները զարթնում են եւ օգնութեան հասնում. բայց մինչեւ նրանց կտուրներից ցած գալը, վիրաւորված որսին գազանը թողնում, փախչում է։ Վիրաւորվածը այժմ ողջ է։

Միւս գիշերը բորենին գնում է նոյն գիւղից քառակուն հեռուն գտնվող Թրքաբնակ Չէյվայ գիւղը, բարձրանում է ամենայն զգուշութեամբ մի կտուր, կոկորդից խեղդում 30—35 տարեկան մի Թուրքի եւ գցում փողոց, ինքն էլ ցած է իջնում, խեղդվածին քաշում է մի քանի սաժէնաչափ տարածութեան վրա գտնվող աւերակ մի տուն, սկսում է անուշ անել։ Գիշերապահները, յանկարծ նկատելով, հրացան են պարպում, բայց ի զուր... ուրուականի նման մի քանի վայրկեանում բորենին փախչում անհետանում է։ Ականատեսները պատմում են, որ թշուառ մարդու ամբողջ փորոտիքը լափել էր, մի քանի տեղեր էլ ատամներով սաստիկ վիրաւորել։

Այդ դեռ քիչ է. երէկ գիշեր էլ մեր հարեւան հայաբնակ Ցայթաղ գիւղում մի երիտասարդ իր հօր հետ գնում է կալը, դիզված ցորենին պահպանութիւն անելու։ Ի հարկէ, նրանք մինչեւ կէս գիշեր գազանի երկիւղից չեն կարողանում քնել։ Կէս գիշերից յետոյ, երիտասարդի քունը տանում է։ Ուստի, չը կարողանալով այլ եւս յաղթել քունը, ասում է հօրը. «Ափօ, մի քիչ մուզաթ կաց, քնեմ»։ Հայրը յօժարվում է։ Բայց որդին դեռ քուն չը մտած, հօրն էլ է քուն տիրում եւ երկուսն էլ անզգայաբար մրափում են։ Անցնում է կէս ժամ։ Բորենին, այդ կալերով անցնելիս, նկատում է դրանց, եւ, չուզելով աջող դէպքը կորցնել, ամենայն զգուշութեամբ ետ է տանում վրայի փալասը, ու այնքան վարպետութեամբ քաշում է հօրից կպած որդուն, որ առաջինը ոչինչ չէ իմանում։ Այս անգամին գազանը որսին գիւղից հեռացնում է եւ մի առւոյտի արտի մէջ սկսում է ուտել։ Հէնց այդ միջոցին դիմացի կողմից նոյն գիւղացի մի ջուրանող վերադառնալիս տեսնում է գազանին. գազանը փախչում է, արդէն կերած լինելով որսի ոտների սրունքները եւ մկանունքները, եւ այլ մասի տեղերից։

Պատմում են, որ մի քանի տեղեր էլ գերեզմաններից հանում է նոր մեռածների դին եւ լափում։ Շատ անտանելի է մեր գիւղացիների դրութիւնը, որովհետեւ ոչ տեղացիք եւ ոչ ոստիկանութիւնը չեն կարողանում մի հնարք գտնել սպանելու այդ գազանին։ (Ոմանց ասելով, դրանք մի քանի հատ են)։

Անցեալ տարի ամբողջ օր ու գիշեր պատեցին 20—25 զինուորներ պ. պրիստավի հետ դաշտը եւ այգիները, բայց ի զուր... Գիւղացիները չոքի եւ միջատների պատճառով չեն կարողանում խրճիթներում քնել։ Կտուրներն էլ ցած լինելով՝ դարձեալ չեն կարողանում հանգիստ քնել։ Ոմանք իրանց կտուրը շրջապատել են ցանկապատով կամ բիզ-բիզ ցիցերով եւ մէջը մտած քնում են։ Այն գիւղացիք, որոնք երկյարկանի կամ բարձր կտուրներ ունեն, ժողովում են մինչեւ 10 ընտանիք դրացիներից եւ միատեղ գիշերում։

Բ. Մարտիրոսեան

## ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳԱՒԱՌԻՑ

Կզնութ գիւղ, յունիսի 13-ին

Մեզանում հունձն արդէն 10 օր է, որ սկսվել է, բայց ինչպէս երեւում է, բերքը սովորականից պակաս է լինելու, որովհետեւ արտերի մեծամասնութիւնը տարվայ ընթացքում մի անգամ է ջրվել, չը նայած որ Երնջակի գետը (Ալինջա-չայ), որտեղից մենք վերցնում ենք մեր ջուրը, միշտ յորդառատ է եղել։ Եւ եթէ փոքր ի շատէ այս տարի բերք կայ, դա էլ շնորհիւ գարնանային անձրեւների է։

Այն առուով, որով մենք ջուր ենք բերում գիւղը, ջուր են ստանում եւ ուրիշ 4 գիւղեր (որոնք գտնվում են մեզանից վերեւ) հերթով իւրաքանչիւրը իր բնակիչների թւի համեմատ։

Ջուր բերելու համար գիւղացիները մեծ նեղութիւն են կրում, որովհետեւ մեր գիւղը, վերոյիշեալ 4 գիւղերից ներքեւ գտնվելու պատճառով, ստիպված է ջրի պահպանութեան համար 20—30 բանւորներ ուղարկել առուի վրա։ Երբ մերոնք ինքնակամ ջուր չեն տալիս նրանց իրանց պարտէզները, մարգերը ջրելու, այն ժամանակ նրանք գիշերով ջրերը ցրվում են (ջրերի ցրվելուն աւելի նպաստում է առուի դիրքը, որ շարունակ անցնում է լեռների փէշերով)։ Այնուհետեւ օրեր են հարկաւոր, այն էլ 100—150 բանւոր, որ կարողանան ցրված տեղը կապել եւ նորից ջրերը հաւաքել. մինչ այս մինչ այն, լրանում է 4 օրը եւ խեղճ գիւղացիք համարեա թէ ոչինչ չը ջրած՝ ջուրը յանձնում են միւս գիւղերին։ Մինչեւ հետեւեալ անգամ հերթը նորից կը գայ, արդէն բանը բանից անցած կը լինի։

Պէտք է ասել, որ առուն այնքան մեծ չէ եւ յարմարութիւններ չունի, որ կարողանայ այնքան ջուր վերցնել, որ բոլոր 5 գիւղերն էլ միաժամանակ օգտվէին, առանց հերթի սպասելու։

Բացի մեր յիշած 5 գիւղերից Երնջակի գետից օգտվում են եւ ուրիշ 13 գիւղեր, որոնք ձգված են նրա ընթացքով։ Ամառվայ օրերին 18 օրից 4 օր պէտք է մեր գիւղին ջուր հասնի։ Այդ դէպքում ուղղակի անտանելի է գիւղացու դրութիւնը։ Փառք կը տայինք Աստուծուն, որ գոնէ երկու շաբաթը մի անգամ ջուր գար գիւղը, բայց շնորհիւ կաշառակեր միրաբների եւ մեծ մասամբ էլ մեր անմիաբան գիւղացիների անտարբերութեան, ամիս է անցնում եւ գիւղը ջրի երես չէ տեսնում։

Այդ բանը աչքի առաջ ունենալով, գիւղացիները ջուր գալու ժամանակ կարասները ջրով լցնում—պահում են խմելու համար, իսկ երբ այդ ջուրը սպառվում է եւ կամ երբեմն էլ երկար մնալուց հոտում է, թէ կանայք եւ թէ տղամարդիկ սափորները ուսերին դիմում են մօտակայ Արազին եւ Նեհրամ Թրքաբնակ գիւղերը ջուր բերելու (թէեւ մեզանում կան ջրհորներ, բայց նրանց ջուրը աղի է)։ Երեւակայեցէք այժմ անասունների դրութիւնը, եթէ մարդկանց դրութիւնը այդպէս է։ Անասուններին եւս կարելի էր քշել վերոյիշեալ գիւղերի առուները, բայց դրանք հեռու են (5—6 վերստ), ուստի ստիպված ջրում են գիւղի մօտ գտնված հոտած ճահիճներում, որտեղ ջրի հետ միասին նրանց բերանն են գնում եւ տզրուկներ, որոնք կպչելով նրանց կոկորդներին՝ թոյլ չեն տալիս խեղճ անասուններին բան ուտել եւ մի երկու օրից յետոյ սատկում են առանց որ եւ է օգնութեան, ինչպէս անցեալ տարի 5—6 դէպք պատահել է։

Ահա այս բոլորից ազատվելու համար գիւղացիները մօտ 15 տարի է, որ անդադար խնդիրներ են տալիս կառավարութեան, որ թոյլ տրվի մի նոր առու հանել իրանց համար, որով ազատօրէն կարողանային օգտվել Երնջակի գետից թէ գարնանը, ջրերի առատութեան ժամանակ, երբ ջրերը ապարդիւն գնում թափվում են Արաքսը եւ գիւղացիների ցանքերը այստեղ մնում չորանում են, եւ թէ ամառը, ընդմիշտ մարդկանց եւ անասունների համար մի խմելու ջուր ունենային։ Իսկ կառավարութիւնը միշտ բացասել է այդ խնդիրքները, ասելով թէ Երնջակի գետը անկարող է Կզնութին ընդմիշտ ջուր տալ։ Բայց Երնջակի գետը այնքան ջուր ունի, որ կարող է գոնէ մի խմելու ջուր բաց թողնել կզնութցիներին։ Եթէ գործին եռանդով կպչողներ լինէին՝ վաղուց գլուխ եկած կը լինէր. հարցն այն է, որ ձեռնարկողը մեծ մասամբ չքաւոր դասն է, իսկ նրա դէմ միշտ արգելքներ են յարուցանում գիւղի «համփաները»։

Թ. քահ. Տէր-Յովհաննիսեան

## ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՒԵՐԻՑ

Յունիսի 18-ին

Հացով հարուստ Շուլաւէրցին անցած մայիսից սկսած մինչեւ այժմ պուդերով ալիւր է առնում։ Մինչդեռ առաջները մեր հարեւան համարեա բոլոր Թուրք գիւղերի միակ կերակրողը շուլաւէրցին է հանդիսացել անբերրի տարիներում։ Առաջ ո՞վ էր տեսել այստեղ բազարում ալիւր ծախելը, իսկ այժմ որ եւ է մի ամսվայ ընթացքում տեղացի մի երկու վաճառական Շորագեալից (Շիրակ) հազար պուդից աւելի ալիւր են սպառել եւ դարձեալ հարիւր պուդերով նորից բերում են։

Դրսից նրա բերած ալիւրը շուկայից դուրս մղեց տեղիս մի երկու ամբարատէրերի անցեալ տարում հաւաքած ցորենը, եւ եթէ ալիւրի այդ ներմուծումն չը լինէր, հասկանալի է թէ տեղացի ցորենատէրը ո՞րպիսի թանգ գնով պիտի ուտեցնէր գիւղացուն իր խոնաւ ու մութ ամբարներում դիզած ցորենը։ Այս դէպքում կեցցէ երկաթուղին. նա ազատեց ցորենի կամ ալիւրի գների արհեստական բարձրացնելուց։ Սա առաջին բարիքն է տնտեսութեան մէջ, որ մենք վայելում ենք Կարսի երկաթուղուց, որի տալիք արդիւնքներից մենք մինչեւ այժմ զրկված ենք միմիայն այն հանգամանքի շնորհիւ, որ ոչ միայն այդ գիծը Շուլաւէրի պէս մի բազմամարդ գիւղով չանցաւ, այլ նոյն իսկ, չունեցանք մի կանոնաւոր ու մեզ յարմար, մօտիկ կայարան այդ գծի վրա։

Անցեալ տարվայ պակաս հունձից յետոյ, մեր գիւղացին մեծ յոյս ունէր ներկայ տարվայ վրա, բայց այդ յոյսն էլ չիրականացաւ։ Հունձը ընկել է, սակայն արտատէրը, կարծես, սիրտ չէ անում իր մշակած արտը մտնելու, կամ եթէ հնձել է տալիս—վա՜յ այն հնձին։ Դաշտային մկները գարնանը ահագին վնասներ տալով եւ դեռ եւս կանաչ հացաբոյսերը արածելով ու ոչնչացնելով չը բաւականացան. այժմ սոսկալի է այդ փոքրիկ գազանների արածը—ցորենը ամբողջ հասկերով են կտրտում եւ իրանց բները քարշ տալիս։ Գարնանը վնասված արտերը կարծես ցորենի արտեր չը լինեն, այլ գետին, ուր ասես թէ մէկը պատահմամբ տեղ-տեղ ցորեն է շաղ տուել. այն ինչ այդ ժամանակում վնասից ազատ մնացածները այժմ, շնորհիւ նոյն այդ մկների, առանց հասկի՝ դատարկ ցողունների շարքեր են ներկայացնում շատ տեղեր։

Եւ ահա եկող նոր տարին իր ձմեռով մի թշուառ հեռանկար է մեր գիւղացու համար։ Ի՞նչով պիտի նա եկող տարի կերակրվի, քանի որ ներկայումս էլ նա քաղցած է։ Իսկ տնտեսել, պահեստի մի մաս յետ ձգել անյաջող տարիներում պէտք ածելու համար—մեր գիւղացին չը գիտէ։ Այդ յատկութիւնը, ինչպէս ամեն տեղ, տրված է միմիայն վաշխառու ամբարատէրերին։

Բօրչալուի ամբողջ դաշտը վնաս է կրել մկներից։ Գանգատներ լսվում են բազմաթիւ գիւղերից։ Ինչպէս լսում ենք, Բօլնիս-Խաչէնցիները կարողացել են բաւականաչափ ազատվել մկան տված վնասից։ Հաւաքական ուժով նրանք թունաւորել են իրանց արտերի մէջ եղած մկների բները եւ շնորհիւ այդ հանգամանքի, ինչպէս պատմում են, այնտեղ հունձը լաւ է։ Մկների թունաւորվելուց վնասվել են եւ դրանց թշնամի թռչունների մի քանի տեսակը՝ ինչպէս ղուզղունը (բազէ), ագռաւը եւ այլն. դրանք նոյնպէս թունաւորվել են մկներ ուտելով։ Ճիշտ է ասում առածը թէ՝ «մինչեւ երեխան լաց չը լինի—մայրը ծիծ չի տալ»։ Մեր գիւղացին միայն այժմ է ափսոսում, որ ինքն էլ խաչէնցիների օրինակին չէ հետեւել եւ բնութեան կամայականութեանն է յանձնել իր արիւն-քրտինքով մշակած արտերը։

Մայիսի ընթացքում շարունակ եկած անձրեւները վնասեցին այգիները. միջոց չեղաւ իր ժամանակին դրանց բժշկել միլդիու եւ թող հիւանդութիւններից, որոնք այժմ բաւականաչափ նկատվում են։ Խաղողի բերքը պակաս է։ Ծառապտուղները լաւ են. վնասվել է միայն թութը, երեւի մայիսի ցրտերից։ Չը նայելով թթենիների ահագին քանակութեանը, մեզանում թթից օղի քաշելու սովորութիւն չը կայ։

Ա. Ի.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գանձակի նահանգի Ջուռնաբաթ գիւղում անասնաբուժական կայարանի շինութեան համար ներքին գործերի մինիստրութիւնը կարգադրել է եօթ հազար րուբլի նշանակել։ Այդ կայարանում, ինչպէս արդէն հաղորդել էինք մենք, մտադրութիւն կայ հակաժանտախտային շիճուկ պատրաստել անասուններին պատուաստելու նպատակով։

Բագվում շուտով կը բացվի մի նոր տեսակի ուսումնարան։ «Каспій» լրագիրը հաղորդում է, որ Բագուի ոստիկանապետը մտադրութիւն ունի մի ուսումնարան բանալ քաղաքային ոստիկանական ստորին պաշտօնեաների համար։ Ուսումնարանը կը բացվի առաջիկայ աշնանից. նրա մէջ դասատուների պաշտօն կը վարեն մի պրիստաւ, պրիստաւի մի օգնական եւ թաղական ոստիկաններ։ Ուսումնարան մտնողները կը սովորեն ոստիկանական այն կանոնները, որոնց կատարելը ոստիկանական ստորին պաշտօնեաների պարտաւորութիւնն է։ Այս նպատակով Բագուի ոստիկանական վարչութիւնը Պետերբուրգից բերել է տալիս ուսումնական պիտոյքներ։

«Новости»-ն հաղորդում է, որ կովկասեան գինեգործների դաշնակցութիւնը շուտով բանալու է Պետերբուրգում կովկասեան գինիների ահագին պահեստներ։ Դաշնակցութեան մէջ մտել են հիւսիսային Կովկասի եւ Անդրկովկասի յայտնի այգետէրեր։ Դաշնակցութիւնը ծախելու է ոչ միայն իր անդամների գինիները, այլ եւ մանր գինեգործների գինիները։ Մաքառելով ռուսական գինու կեղծման դէմ, դաշնակցութիւնը պահեստներին կից բանում է յատուկ լաբօրատօրիա՝ ստացված գինիները քննելու համար։

Պօստային եւ հեռագրական գլխաւոր վարչութեան նորերումս հրատարակած հաշուից, որ վերաբերում է անցեալ 1900 թւականին, երեւում է, որ Ռուսաստանի բոլոր պօստային եւ հեռագրական հաստատութիւնների մէջ ծառայում էին ընդամենը 23,053 աստիճանաւորներ, որոնց թւում նաեւ 1,059 կին։ Ուրեմն կանանց թիւը այդ հաստատութիւնների մէջ 5%-ից էլ պակաս է։

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, առաջարկել է երկաթուղիական վարչութիւններին, որ նրանք այժմեանից նախապատրաստութիւններ տեսնեն մեծ քանակութեամբ հացահատիկների բեռներ տեղափոխելու համար, որովհետեւ հացահատիկների բերքը այս տարի շատ առատ է։

«Օրէնսդրական ժողովածուի» մէջ հրատարակված է մի կարգադրութիւն, որով ներքին գործերի մինիստրին իրաւունք է տրվում թոյլ տալու հայրենիք վերադառնալ այն մեչչաններին, որոնք վարչական կարգով աքսորված են Սիբիր կամ Ռուսաստանի հեռաւոր նահանգները, եթէ միայն աքսորականները լաւ են պահել իրանց աքսորատեղերում։

Խաղաթղթի կայսերական գործարանում, ինչպէս հաղորդում է «Новое Время» լրագիրը, սկսել են արդէն նոր ձեւի խաղաթղթեր պատրաստել։

Ռուս հոգեւորականները իրանց «քաջագործութիւններով» երբէք յետ չեն մնացել մեր հոգեւորականներից, որին մի նոր ապացոյց է տալիս Տաւրիկեան թեմի առաջնորդը։ Այսպէս, «С. П. Вѣд.» լրագրի ասելով, այդ առաջնորդը յայտնել է, որ իր թեմի հոգեւոր սեմինարիաներում աւարտողներից ոչ ոք չը պէտք է մտնի աշխարհիկ բարձրագոյն դպրոցները։ Այս պատճառով այն աշակերտները, որոնց վերաբերմամբ սեմինարիական վարչութիւնը կասկածներ է տանում, թէ աւարտելուց յետոյ նրանք կարող են մտնել համալսարանները, ստանում են աւարտման այնպիսի վկայագրեր, որոնք փակում են նրանց առաջ բարձրագոյն դպրոցների դռները։

«Կառավարութեան կարգադրութիւնների եւ օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակված է, որ նաւթարդիւնաբերողների համաժողովներին վերաբերաբերեալ կանոնները փոփոխութեան են ենթարկվում։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, ի միջի այլոց, կարգադրել է գիմնազիաների ուսուցիչներին ռոճիկ վճարել ոչ իւրաքանչիւր ուսուցչի աւանդած դասերի թւի համեմատ, ինչպէս վճարվում է այժմ, այլ անկախ այդ հանգամանքից։ Ուսուցիչները կը ստանան այսուհետեւ բաւարար ռոճիկ, որքան էլ լինի նրանց դասերի թիւը։

Լրագիրները հաղորդում են, որ արական գիմնազիաներում վերջնական քննութիւն բռնող կողմնակի անձինք ազատվում են գրաւոր աշխատանքներից հին լեզուներից քննութիւն բռնելիս։

Պետերբուրգի տեխնօլօգիական ինստիտուտի առաջին կուրսում առաջիկայ ուսումնական տարւայ սկզբին կարող են ընդունվել միայն 250 ուսանողներ։

—

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, թէ ներքին գործերի մինիստրի ձեռնարկած ճանապարհորդութիւնը դէպի Ռուսաստանի ներքին նահանգները կապ ունի գիւղական ազգաբնակութեան վերաբերեալ կանոնադրութեան փոփոխութեան եւ տեղական վարչութեան այլ հարցերի հետ։

—

Վարշավայի լրագիրների ասելով, Լէյպցիգեան բանկի սնանկութիւնը ազդել է նոյնպէս Լեհաստանի դրամատէրերի վրա, մանաւանդ այնտեղ ապրող գերմանացի դրամատէրերի վրա, որոնք իրանց գումարները պահում էին այդ բանկում։ Այդպիսի վնասվածներից շատ կան Լօձում։

—

Հարաւ-արեւմտեան երկաթուղիական գծերում մտցնվում են առանձին լողարանաւոր գնացքներ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ էլէկտրօտեխնիկների ժողովը նշանակված է օգոստոսին Թիֆլիսում։

—

Զինուորական բժշկական ակադեմիայի վարչութիւնը վճռել է առաջիկայ 1901—1902 ուսումնական տարւայ ընթացքում դասախօսի կոչում ստանալու համար տեղի ունեցող քննութիւնները անել միմիայն երկու անգամ՝ նոյեմբերին եւ մարտին։

—

Մի մասնաւոր գործի առիթով, Կառավարիչ Սենատը բացատրեց, որ այն գինեգործը, որ գինու առեւտուր է անում ոչ իր բնակարանում, այսինքն, ոչ այն կալուածում, ուր ինքը ապրում է իր ընտանիքով կամ ոչ իր բնակարանին կից եղող մի շէնքում, այլ մի առանձին շինութեան մէջ, որ վարձված եւ յատկապէս յարմարեցրած է գինու մանրածախսի համար,—ենթակայ է պատասխանատւութեան ակցիզային տուրքերի կանօնադրութեան 981 յօդուածի համաձայն։

—

Օդէսայի համալսարանի պատմական-լեզւաբանական ֆակուլտէտը այս տարի աւարտեցին միայն երեք հոգի։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Կանանց շորերի շլէյֆները առհասարակ օդ են ապականում, պոչերով բարձրացրած թոզով։ Պետերբուրգում կանանց մի նոր ընկերութիւն է կազմվում, որի անդամուհիները պարտաւոր են կարճ շորեր հագնել, հողից 1—4 վերշօկ բարձր։ Մինչեւ այժմ, անդամուհիների թիւը 50-ի է հասել. երբ հարիւրին կը հասնի դրանց թիւը, բոլորն կարճ շորեր կը հագնեն։ Շատ լաւ կանէին մեր տիկիններն եւ օրիորդները, եթէ հետեւէին այս գեղեցիկ օրինակին։ Այլ եւս Ժելեզնավօդսկի եւ Կիսլավօդսկի մաքուր օդը չէին ապականի շորի պոչերով բարձրացրած փոշիներով։ Այդ կուրօրտների այցելուների մեծամասնութիւնը Բագուի հարուստ հայերն են կազմում, իսկ մենք գիտենք, որ, որքան հարուստ է հայ կինը, այնքան երկար է նրա շորի պոչը»։

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Յունիսի 21-ին, նախկին հայոց արական դպրոցի դահլիճում, Նոր-Նախիջեւանի Թեմական դպրոցի աշակերտների ընտանեկան երեկոյթն էր։ Երեկոյթը բաղկացած էր երեք բաժիններից։ Երգեցին քառաձայն խումբը եւ սօլօներ։ Բացի երգերից, նուագեցին եւ ոտանաւորներ կարդացին։ Երրորդ մասն էր «Վարդան Մամիկոնեանի մահը» տեսարանը, Ռ. Պատկանեանից վերցրած։ Վերջը սկսվեցին պարեր, որոնք տեւեցին մինչեւ առաւօտեան ժամի 5-ը։ Ընդհանրապէս երեկոյթը աջող անցաւ։ Ինչպէս լսում ենք, դպրոցի աշակերտները մտադիր են տալ մի շարք ընտանեկան երեկոյթներ։ Ցանկանում ենք աջողութիւն»։

—

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՑ գիւղից մեզ գրում են. «Մեր գաւառի արտերը առատութիւն էին խոստանում, բայց կարկուտը եւ մուկը յուսախաբ արին գիւղացուն։ Կարկտահար են եղել Քարվանսարա, Թալա, Քրդեւան, Խաչթառակ, Խաւարաձոր, Ներքին Աղդան եւ Ռեւազլու գիւղերը. իսկ մկնկերը վնասել են Սեւքար, Աչաջուր, Սոփ, Մելիք եւ Ղազախի երկրորդ մասի համարեա բոլոր գիւղերին։ Կարկտահար գիւղերի արտերը հարում են դարմանի համար, շատ քիչ արտեր են հնձում։ Վնասները այս են. 1) Քարվանսարա—ցորենի արտ՝ 3009 ր., գարու արտ՝ 276 ր. 2) Թալա գիւղ—ցորենի արտ՝ 4360 ր. գարու արտ՝ 483 ր. այգի եւ բանջարանոց՝ 656 ր., 3) Քրդեւան գիւղ—ցորենի արտ՝ 415 ր. 50 կ., գարու արտ—1058 ր. 3) Խաչթառակ գիւղ. ցորենի արտ—816 ր. գարու արտ—46 ր. միայն չորս գիւղերի վնասների գումարն է 12,341 ր. 50 կ. ցորեն—գումար 1863 ր.+656 ր.—ընդհանուր գումարն է=14,860 ր. 50 կ.։ Դեռ հաշւած չեն գարնանացանը եւ խոտհարքը։ Մեր գաւառը այս տարի խիստ նեղութեան մէջ կը լինի հացի կողմից։ Թողնենք բնութեան պատուհասները, ինչ կասէք մարդու ձեռքով հասցրած վնասների համար։ Վերոյիշեալ գիւղերում, մանաւանդ Սեւքարում, քիչ ձի է մնացել, չարունակ գողանում են օրը ցերեկով։ Եւ այս բոլոր գողութիւնները կատարվում է այնպէս, բերդանկա հրացանով զինված թուրքերի ձեռքով, որոնց դէմ անզէն հայ գիւղացին ինչ կարող է անել։ Օրերումս մեր գիւղի սարից էլի տարան 8 հատ եզ, որոնք արժեն 240 ր. յունիս ամսում գողացված 12 գոմէշների համար 150 ր. էին պահանջել, որ վերադարձնեն. տէրերը պարապ անելով տանում են փողերը եւ... ձեռնունայն վերադառնում, որովհետեւ թուրքերը ասել են, որ «մենք վախենում ենք քարվանսարեցիներից, մեզնից գանգատ կը տան եւ մեզ կը չարչարեն։ Ասում են, երբ գաւառապետը խոստացել է հրացան տալ պահապան հայերին. տեսնենք»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ

—

Վիէննա, յուլիսի 9-ին

Յուլիսի 7-ին (ն. տ.) կէսօրէն յետոյ, ժամ 5-ին, տեղւոյս յունաց ս. Երրորդութիւն եկեղեցու մէջ (Ֆլայշմարքդ) մեծ հանդէսով տեղի ունեցաւ հայ ազգի ականաւոր անդամներէն մեծ. տեար Յակոբ Տէղեանի որդւոյն՝ պ. Արամի պսակի օրհնութիւնը՝ օրիորդ Էլզա Կէրպէրի հետ, դուստր հայասէր մայեօր Կէրպէրի։ Պսակը կատարեց տեղւոյս այցելու հովիւ արժանապատիւ Տէր-Օհան աւագ քահանայ Մանդակունի, աւելորդ է ըսել թէ հայ ծէսով՝ ինչ որ նորանշան բան մը եղաւ։ Տեղս գտնվող գրեթէ բոլոր հայերէն զատ, օտար ազգաց եւս երկսեռ բազմութիւնը այնքան ստուար էր, որ՝ ինչպէս կըսուի՝ եկեղեցու մէջ ասեղ ձգելու տեղ չը կար։ Յատուկ տեղ բռնած էին յունաց գերապատիւ արխիմանդրիտը, հայ եւ օտար նշանաւոր եւ պաշտօնական անձանց ընտրեալ թիւ մը, որ հանդիսին շուքը կաւելցնէր։

Պսակի սկիզբները՝ ամուսնութեան պայմանները գծող եւ երդման վերաբերեալ բաւական երկար հատուած մը արժանապատիւ հայրը գերմաներէնի թարգմանեց՝ այնպիսի յուզեալ եւ գրաւիչ կերպով՝ որ պսակվող ամոլէն զատ, շատ օտարներ եւ օտարուհիներ եւս յարտասուս շարժեց՝ որոնք յետոյ չէին դադրեր գովաբանելէ մեր եկեղեցու արարողութեան վսեմութիւնը։ Նորապսակ պ. Արամ տոհմային զգացումներով սնած վարպետ իւղանկարիչ եւ ուղղամիտ հայ մէ։ Իսկ հարսը բոլոր ծանօթներէն վկայած ազնւասրտութեան կը միացնէ նաեւ մասնաւոր հայասիրութիւն մը, որ թելադրած է զինքը այն երջանիկ միութեան առթիւ պաշտօնապէս հայ եկեղեցու զաւակ գրվելու։ Մեր ջերմ եւ սրտագին շնորհաւորութիւնները։

Ուրիշ կարեւոր լուր մը. յիշեալ տէր հայրը լուրջ ջանքեր կընէ տեղս ազգային մատուռ մը բանալու, որոյ համար ուրախութեամբ կը լսենք թէ, մի քանի բարեսէր ազգայինք՝ գլխաւորապէս ռուսահայ ծանօթ բարերար Աղա Դաւիթ Իզմիրլեան, խրախոյս տուած են իրեն։ Յայտնի է սակայն՝ թէ սոյն գաղափար մինչեւ իրականութեան հասնիլը դեռ շատ ջանքերու կը կարօտի, մանաւանդ Վիէննայի պէս տեղ մը՝ որոյ հայ գաղութը կազմող սակաւաթիւ ազգայնոց գրեթէ իւրաքանչիւրը զատ բնավայրէ եւ զատ կարծիքի տէր լինելը արդէն հռչակված է։ Բայց ով գիտէ, թերեւս։ Անցած տարի ալ, երբ սոյն քահանան պատարագ մատուցանելու համար տեղ մը վարձելու ջանքեր կընէր, առջի բերան շատեր ծաղրեցին զինք եւ իր ձեռնարկը, նախորդ փորձերու անյաջողութիւններէն յուսահատեալ։ Սակայն անվհատ քահանան իրեն աջակիցներ ճարեց, նպատակը իրագործեց եւ կառավարութեան առջեւ ալ՝ Վիէննայի մէջ հայ ժողովրդի մը գոյութիւնը պաշտօնապէս ծանօթացուց։

Միայն թէ՝ խնդիրը այս անգամ անցեալ տարվան պէս այնչափ դիւրալոյծ չը թուեր, թէպէտ չենք ալ դադարեր յաջողութիւն մաղթելէ։

Յ. Գ.

### ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, յունիսի 10-ին

Առհասարակ պարսկաստանցիները ռուսահայերի վրա մեծ յոյս ունեն։ Նրանք կարծում են, որ սրանց միջոցով միայն կարող են իրանց կրթական գործը առաջ տանել։ Եւ եթէ լաւ քննելու լինենք, կը տեսնենք որ իրօք այդպէս էլ է։ Սակայն Կովկասի երիտասարդութիւնը լուրջ ուշադրութիւն չէ դարձնում պարսկահայերի կրթական գործի վրա։ Նա խօսքերով միայն ջատագով է հանդիսանում նրանց, իսկ գործով եւ ոչ մի նպաստաւոր շարժում չէ ցոյց տալիս։

Պարսկաստանցի հոգաբարձուն, որ եկել է Կովկաս ուսուցիչներ վարձելու իր դպրոցների համար, զուր տեղը որոնում է ցանկացողների եւ յետոյ ստիպված վերցնում է պատահածին—եւ մի կէս տարի էլ, կամ աւելի, ուշացած գնում դպրոցը մխիթարելու։ Անկասկած տուժողը մնում է ուսումնարանը եւ մատաղ սերունդը, որոնք գրկաբաց ընդունում են կրթութեան ղեկավարներին, բայց շուտով էլ հիասթափվում են՝ նրանց գիտութեան եւ բարոյականութեան ապացոյցները տեսնելով։ Եւ պարսկաստանցուն մնում է իրաւացի կերպով կարծել, որ կամ բոլոր կովկասցիները անարժաններ են, կամ «խելքը գլխին մարդը» Կովկասից չի վերկենալ գնալ օրինակ՝ Թէհրան։

Դեռ մօտ մի տարի սրանից առաջ «Մշակի» մի բանասիրականում մէկը գանգատվում էր, որ Սալմաստի գաւառում շատ գիւղեր դպրոց չունեն եւ շատ գիւղերի դպրոցները փակ են մնում ուսուցիչ չունենալու պատճառով։ Դա Սալմաստն է եւ գիւղերն են։ Իսկ մայրաքաղաքին ինչ կասէք, որը ունի վարժարան, եւ այն էլ երկսեռ, ունի հոգաբարձութիւն, որ տարեկան հազարներ է ծախսում, բայց որտեղ տարվայ կէսին դպրոցը փակվում է ուսուցիչների պատճառով։

Ո՞ւմ մեղադրել, միթէ հոգաբարձութեան, բայց նա գուցէ եւ մեղաւոր չէ, որովհետեւ չէ ճանաչել մարդկանց եւ հրաւիրել է նրանց, որոնք համաձայնվել են այնտեղ գնալու։ Ի՞նչը մեզ առիթ տուեց այս բոլորը գրելու։ Թէհրանի Հայկազեան երկսեռ վարժարանի թշուառ դրութիւնը։ Մօտ 20 տարի է, որ այդ վարժարանը գոյութիւն ունի, բայց լոկ անուամբ։ Չը կան գործիչներ, չը կան ուսուցիչներ։ Վարժարանն ունի շէնք, ունի հոգաբարձութիւն, ունի բաւականաչափ դրամագլուխ, եւ ամեն տարի հազարներ է ծախսում ուսումնարանի համար, բայց վայ ուսումնարանին։ Փողերը գնում կորչում են, տարիները անհետ գլորվում եւ մատաղ սերունդը ոչնչով չէ զանազանվում նախկին վիճակից։ Ազգից հաւաքված կոպէկ կոպէկ դրամագլուխը կորչում, անհետանում է, իսկ դպրոցը դառնում է ասպարէզ տուր ու դմփոցի, հայհոյանքի ու պարսաւանքի, եւ վերջապէս անբարոյական երեւոյթների։ Իսկ հերոսները—կրթութեան համար հրաւիրված Կովկասի երիտասարդներն են։

Թէհրանցի հայը ստիպված իր որդուն տարվայ կէսին հանում է ուսումնարանից եւ օտարազգի վարժարան է տալիս նրան, կամ դատապարտում է նրան յաւիտենական անկրթութեան։

Մեզ վիճակվեց մէկ տարի միայն Թէհրանում ուսուցչութիւն անել, եւ մենք տեսանք, թէ ինչ սոսկալի բան են այն արարածները, որոնք ուսուցիչ մականվան տակ յանձն են առնում այդ պաշտօնը։ Նրանք ընդունակ են ամեն բարոյական սրբութիւն ոտի տակ տալու եւ պատճառ են դառնում հոգաբարձութեան յուսահատութեան, աշակերտների փչանալուն եւ հասարակութեան մէջ անտարբերութեան հաստատվելուն։

Մ. Աւետիսեան

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆիլադելֆիայից հեռագրում են «Morning Post» լրագրին, թէ ամերիկական Միացեալ-Նահանգների անկախութեան տարեդարձի տօնին ներկայ էր եւ չինական դեսպան Վուտինգ-Ֆանգ, որ մի գեղեցիկ ճառ արտասանեց այս առիթով։ «Չինացին,—նկատում է «Morning Post»,—որ փառաբանում է ազատութիւնն եւ անկախութիւնը, յամենայն դէպս մի բոլորովին նոր եւ անսովոր երեւոյթ է»։ Ամերիկացիները շատ գոհ մնացին նրա ճառից եւ ոգեւորված ծափահարում էին։ Անկախութեան տօնը կատարվեց հէնց այն նշանաւոր դահլիճում, որտեղ 125 տարի առաջ ստորագրվել էր անկախութեան դէկլարացիան։ Այդ դահլիճը, ինչպէս յայտնի է, Ամերիկայում անուանվում է «ազատութեան օրօրոց»։

—Զագրէբի «Србобран» լրագիրը, մի ընդարձակ յօդուածում խօսելով չէխերի եւ աւստրիական գերմանացիների յարաբերութիւնների մասին, ի միջի այլոց ասում է. «Ամենակուլտուրական ժողովուրդը Աւստրիայում, ամենավաճառաշահ երկիրը ամբողջ պետութեան մէջ չէխերն են եւ չեխական թագաւորութիւնը։ Աւստրիայի նիւթական բարեկեցութեան ամենագլխաւոր աղբիւրը Չեխիան է։ Եւ ինչ է ստանում չէխական ժողովուրդը, իբրեւ վարձատրութիւն այդ ամենի համար։ Աւստրիան չէ տալիս այդ ազգին այն, ինչ որ նրան է պատկանում՝ համաձայն պատմական իրաւունքի, ոյժի, մտաւոր ծառայութիւնների եւ արժանաւորութեան։ Աւստրիան յանձնել է չէխերին գերմանացիների կամայականութեան, որոնք բացարձակ քարոզում են «Los von Oesterreich» եւ առանց քաշվելու, բացայայտ կերպով, ասում են, թէ աւստրիական երկիրները պէտք է միացնել Գերմանիային, որ իր հերթում աշխատում է ընդարձակել իր սահմանները մինչեւ Ադրիատիքական ծովը եւ ապագայում տիրել Բալկանին»։

## „ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 յուլիսի

ԲԵԼԳՐԱԴ։ Պաշտօնապէս հաղորդվում է, թէ Կօլաշինում, Հին-Սերբիայում, մինչեւ այժմ սպանված են երեք սերբ։ Շարժման գլուխ է կանգնած Պրիշտինի մուտեսարիֆ Դժեմալ-բէյ։ Երէկ նա խուզարկեց մի քանի սերբական եկեղեցիներ այն պատրուակով, թէ այնտեղ թաքնված են զէնքեր, բայց ոչինչ չը գտաւ։ Պրիշտինի սերբական հիւպատոսին լուրջ վտանգ է սպառնում։ Մուֆտին պահանջեց, որ հիւպատոսն արտաքսվի Պրիշտինից։

ԳՐԱԱՖՐԷՅՆԷՏ։ Բօէրական բանակի վրա Բօօում յանկարծակի յարձակումն գործվեց. գերի են առնված 31 բօէրներ. առնված են նոյնպէս 57 ձիեր։

ԿՐԱԴՕԿ։ Յունիսի 30-ին մահապատժված է մի ապստամբ սպանութեան եւ դաւաճանութեան համար։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեներ հեռագրում է, թէ բօէրները այրեցին հասարակական շինութիւնները Մուրրէնսբուրգում եւ մի քանի ագարակներ։ Բրիտանական երկու զօրաբաժիններ հասան Զարուստ եւ մի քանի գերիներ վերցրին։ Անգլիացիներից սպանված է մի օֆիցէր, իսկ երեք օֆիցէր եւ 24 զինուոր վիրաւորված են։ Գնդապետ Բրօդվուդի զօրաբաժինը յարձակումն գործեց Րէյցի վրա եւ գերի վերցրեց Շտէյնի եղբայրներին. ինքը Շտէյն փախաւ։

«Daily News»-ին գրում են. «Կիտչեներ հաղորդեց կառավարութեանը, թէ հետեւակ գնդերի մեծ մասը կարող է դուրս տարվել հարաւային Աֆրիկայից. դրա փոխանակ նա խնդրում է ուղարկել մեծ քանակութեամբ հեծելազօրք։ Եթէ հետեւակ զօրքերը տարվեն, կառավարութիւնը կը կենտրոնացնէ միացածներին Դուրբանի, Մարիցբուրգի եւ Իօհաննէսբուրգի մէջ, աւելորդ համարելով պաշտպանել Կապշտադտ-Պրետորիայի ամբողջ գիծը»։

ՊԵԿԻՆ։ Լիխունգչանգ խնդրեց դեսպաններին հեռացնել զօրքերը մինչեւ օգոստոսի 2-ը պալատներից եւ տաճարներից։ Դեսպանները համաձայնութիւն տուին եւ տեղեկացրին այդ մասին դաշնակից զօրքերի զօրապետներին։

ՓԱՐԻԶ։ Ազգային տօնը անցաւ փառաւոր կերպով. բազմաթիւ շինութիւններ լուսավառված էին. շատ տեղերում սարքված էին ֆէյերվէրկներ. տեղի ունեցան նաեւ բացօթեայ պարեր, փողոցներում արտասովոր կենդանութիւն էր տիրում։ Պիա փողոցում մի տանից գնդակ արձակեցին եւ ծանր կերպով վիրաւորեցին մի կնոջ. ուրիշ նշանաւոր դէպքեր տեղի չունեցան։ Ընդամէնը ձերբակալված է 14 մարդ։

ՀՌՈՄ։ Կրիսպի ուղեւորվեց Պետերբուրգ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պենզայից, Տամբովից, եւ Տուլայից հաղորդում են, որ այդ քաղաքներում բացվել են գինու արքունի մենավաճառանոցներ։

ԽԱՐԿՕՎ։ Երդուեալ հոգաբարձուները, սնանկացած առեւտրական բանկի գործը կարգի բերելիս, երեւան հանեցին խոշոր զեղծումներ, որոնք քրէական յանցանքների բնաւորութիւն ունեն եւ հաղորդեցին այդ մասին դատարանին։

**ՎԱՐՆԱ**։ Հրաժեշտի ճաշկերոյթի ժամանակ Էվկսինոգրադում Իշխան Ֆերդինանդ բաժակ առաջարկեց Ռուսաստանի կենացը, որ Բօլգարիայի եւ բօլգարական զօրքի ստեղծողն է, ինչպէս եւ Թագաւոր Կայսրի, ռուսաց ցամաքային եւ ծովային զօրքերի կենացը։ Մեծ-Իշխան Ալէքսանդր Միխայլօվիչ պատասխանեց՝ բաժակ առաջարկելով Իշխան Ֆերդինանդի եւ բօլգարական զօրքի կենացը։

**ԷՎԿՍԻՆՕԳՐԱԴ**։ Երէկ Մեծ-Իշխան Ալէքսանդր Միխայլօվիչ Իշխան Ֆէրդինանդի, դիպլօմատիական գործակալ Բախմետեվի, մինիստրների եւ իշխանական չքախմբի ուղեկցութեամբ այցելեց Բուրգաս Նաւահանգիստը։ Հաւաքվել էր ժողովրդի մեծ բազմութիւն։ Զօրահանդէսից յետոյ, նախաճաշի ժամանակ, Իշխան Ֆէրդինանդ շնորհակալութիւն յայտնեց Նորին Բարձրութեանը բնակիչների կողմից եւ բաժակ առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը։ Մեծ-Իշխանը ցանկութիւն յայտնեց, որ Բուրգասը բարգաւաճի ապագայում առեւտուրի ասպարէզում։ Երեկոյեան տեղի ունեցաւ մեծ ճաշկերոյթ «Ռօստիսլավ» զրահակրի վրա։ Այսօր Մեծ-Իշխանը թողնում է Բուրգասը եւ ուղեւորվում է Կիւստէնջէ։

3 յուլիսի

**ՊԵՏԵՐԲՈՒՐԳ**։ Ֆինլեանդական զինուորական շրջանի չտաբի կառավարիչ գեներալ-լէյտէնանտ Գլազով նշանակվում է գլխաւոր շտաբի ակադեմիայի կառավարիչ։

Ցայտարարվում է, որ ֆինանսների մինիստրի փոխարէն Նրա օգնականը հնարաւոր համարեց թոյլ տալ արտահանելու լուցկիներ առանց ակցիզի դէպի Չինաստան, Կեախտայի մաքսատան միջով, ինչպէս պահանջում է ընդհանուր օրէնքը։

Ցայտնի յարգված գործիչ հիւսիս-արեւմտեան երկրում Մուրավեվի ժամանակ, պատւաւոր խնամակալ Իվան Պետրօվիչ Կորնիլօվ վախճանվեց յուլիսի 2-ին։

**ԼՕՆԴՕՆ**։ Դէզօլացիօնսկօպից Գրաաֆրէյնէտի վրայով հաղորդում են, թէ չորս զօրաբաժիններով Բօօի բօէրական բանակի վրա յարձակվելու միտքը յղացված էր երկու շաբաթ առաջ։ Զօրաբաժինները կեղծ ցոյցեր էին անում զանազան ուղղութիւններով մինչեւ վճռական րօպէն, երբ գնդապետ Սկօբէլլ, որ ղեկավարում էր յարձակումը, բաժանեց Կապի հեծեալներին եւ հրաման տուեց յարձակումն գործելու թշնամու դիրքի վրա արեւելեան կողմից եւ մի եւ նոյն ժամանակ ինքը ուլաններն եւ իօմանրիների հետ շրջապատեց դիրքը արեւմտեան կողմից։ Շէպէրս, գլխաւոր ոյժերը հետը առած, հեռացաւ արագացրած քայլերով։ Գնդապետ Սկօբէլլ գրաւեց բօէրների բանակը եւ աւարեց 56 ձի, 25 հրացան, ռազմական մթերքներ եւ ուտելիքի պաշարեղէն։ Գերի առնվեցին նաեւ 25 բօէրներ։ Անգլիացիները կորուստ չունեցան։ Ինչպէս պարզվեց, համարեա բոլոր գերիները ապստամբներ են։ Գերիների մէջ են Շէպէրսի ադիւտանտ Լիբէրբէրգ եւ պօրուչիկ Լուի։

Կիտչեների հեռագրում Պրետօրիայից հաղորդվում է, որ այնտեղ է տարված Նախագահի պաշտօնակատար Շալկ-Բուրգէրի գերի բռնված ամուսինը։

**ԼԷՅՊՑԻԳ**։ Հաղորդում են, թէ Լէյպցիգի բանկի վերատեսուչ խորհրդի նախագահ Դօդէլ այսօր արձակված է նախնական բանտարկութեան տակից։

**Կ. ՊՕԼԻՍ**։ Խեդիւն ուղեւորվեց դէպի Կարլսբադ։

**ՇԱՆԳՀԱՅ**։ Խանկօուի մօտ ջրերի վարարմանը զոհ են գնացել հարիւրաւոր մարդիկ։

## ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

**Մեր արտասահմանեան բղբակիցներին**։ Ռուսաստանում հրատարակվող հայ լրագրի համար ամենամեծ հետաքրքրութիւն ներկայացնում են արտասահմանի հասարակական-կուլտուրական երեւոյթները և այն բոլորը, ինչ որ վերաբերվում է յատկապէս հայերին։ Քաղաքական նորութիւնները մայրաքաղաքների լրագիրները ստանում են հեռագրով և այդ լրագիրները հասնում են այստեղ աւելի շուտ, քան մեր արտասահմանեան թղթակիցների նամակները այդ նոյն հարցերի մասին։ Էլ չենք խօսում ուրիշ անյարմարութիւնների մասին։ Խնդրում ենք նոյնպէս ի նկատի ունենալ «Մշակի» ծաւալը և տալ ամփոփ յօդուածներ ու նամակներ։ Յիշեցնում ենք, որ յօդուածները և թղթակցութիւնները կարող են ուղարկել բանդերօլով, վրան գրելով, որ տպագրութեան համար է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
### Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա. Վօրօնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

**Բ. Ա. Նաւասարդեան**—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

**Ն. Մ. Ձիկօվանի**—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

**Ն. Ի. Գզելիեվ**—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

**Զ. Ի. Թաքնասեանց**—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

**Ա. Գ. Խարապետեանց**—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

**Ն. Ն. Ռոստոմբէկով**—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

**Ն. Ի. Գզելիեվ**—7—8 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

**Բ. Ա. Նաւասարդեան**—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

**Օ. Տ. Առվանեցակի**—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

**Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ**

### ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ իր առեւտնում ներկայ տարվայ յուլիսի 3-ին, ցերեկվայ ժամը 1-ին, նշանակված է աճուրդ կապալով տալու բէտօնի կոյուղի շինելու գործը՝ հատ. 365×0,25, երկ. 72,00 պազ. սաժ. Դավիդօվսկայա փողոցում եղածից Տիխինվալսկայա եւ Լաբօրատօրնայա փողոցների վրայով մինչեւ Գուրգէնիձէի տունը։ Աճուրդին մասնակցել ցանկացողները պայմանները կարող են տեսնել Վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, առաւօտեան ժամը 9-ից մինչեւ ցերեկվայ ժամը 3-ը։

3—3

### ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ

Ցանկանում է հայ մանուկների հետ պարապել հայոց լեզուի մասնաւոր դասերով, մատչելի գներով։

Ցանկացողները կարող են դիմել չերամապահական կայարանը Մուշտայիդ, առաւօտեան ժամը 8—12, իսկ ճաշից յետոյ ժամը 2—5-ը, Մօսկօվսկայա փողոց, տուն № 18. հարցնել՝ Շմաւօն Ցովսէփեանցին։

2—3

Մամուլի տակից դուրս եկաւ
(8-րդ տպագրութեամբ) իմ կազմած

### ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ

Ա. տարի

Հաւանութիւն գտած (одобрено) Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան կողմից

—

Մինչեւ յուլիսի վերջը մամուլի տակից դուրս կը գայ

«ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՈՒԽՏԻ»

Ցարմարեցրած պետական դպրոցների համար։

(Ե. Հ. Հ.)

2—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտւութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։



### ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

### ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բազրում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապօվի եւ Արիստակօվի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։

35—100

### ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է, որ նրա դիւանատանը յուլիսի 6-ին, ժամի 12-ին նշանակված է աճուրդ կապալով տալու երկաթուղային կայարանի միւս կողմում գտնվող քաղաքային ջրամբարի մօտ շինվելու տան աշխատանքները։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան ջրաբաշխական բաժանմունքում բոլոր լի օրերը, ժամի 9-ից մինչեւ 3-ը։

2—3

### ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ

աշխատութիւններից ձեռք բերելու համար՝ այսուհետեւ պէտք է դիմել. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенберъ“ (Лорисъ Меликовская, № 11), Г. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են զանազան գրքեր։ Ամեն մի նոր լոյս տեսած գիրք ցանկացողներին կարող ենք ուղարկել։

9—10

Լաւ տիրապետած լինելով հայոց գրաբար եւ աշխարհաբար լեզուներին եւ երկար տարիների ընթացքում հմտանալով գրագրութեան մէջ, ցանկանում եմ վարել այդ պաշտօնը հոգեւոր վարչութեան առեւտններում եւ կամ պաշտօնական անձնաւորութիւնների մօտ։

Ցանկացողները թող առաջարկեն իրանց պայմաններն ինձ—Ахалкалаки. Оганесу Айрапетянцу.

2—3

Լոյս տեսաւ

Ա. Լալայեանի

### Ա Լ Բ Օ Մ

Կարս քաղաքի եւ նրա շրջանի տեսարանների (Կարս, Սարիղամիշ, Արդահան, Խնծկոնք, Մաղասու բերդ, Անի, Բագնայր, Հոռոմոս, Զրփլու. ընդամենը 32 նկար)։

Գինն է 1 ր. 50 կ. ճանապարհածախսով։

Դիմել՝ А. Лалаянцу. Карсъ.

9—10

### Լազարեան ճեմարանից Արեւելեան լեզուաց

### ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑԻ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՀԱՇԻՒԸ 1900 ԱՄԻ

| Մ Ո Ւ Տ Ք | %-աբեր թղթ. | Առձեռն դրամ. |
|---|---|---|
| Մնում էր առ 1-ն յունվարի 1900 թ. . | 78,050 | 835 ր. 91 կ. |
| 1900 ամի ընթացքում ստացել է . . | 3,200 | 2,138 » 5 » |
| | 81,250 | 3,973—96 |

Ծ Ա Խ Ք

| | |
|---|---|
| Վճարված է գնված %-աբեր թղթերի գին 3,146 ր. 11 կ. եւ 1898 եւ 1899 թ.թ. դրամագլխի հաշիւները տպագրելու համար 37 ր. 20 կ., ընդամենը | 3,183 31 |
| Առ 1-ն յունվարի 1901 թ. առձեռն պատրաստ կայ... 81.250 ր. . . | 790 65 |

Ծ ա ն օ թ ու թ ի ւ ն. Դրամագլուխը գտնվում է Մօսկվայի նահանգական գանձարանում եւ պիտի աճէ, 1883 թուից սկսած, 125 տարվան ընթացքում, մինչեւ 12 միլիօն գումարը, այնուհետեւ պիտի գործադրվի նուիրատուի անունով դպրոցներ հիմնելու եւ թօշակաւորներ պահելու համար։ (Հ. Հ. Ռ.)

2—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ւ

### Լ Է Օ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Հատոր առաջին։—XVI—XVII դար

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ

Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.

Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ».

7—10

❋ ❋ ❋

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

### ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ, երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակ կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտօվսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Տօվմանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (Հ. Ռ.)

7—25

❋ ❋ ❋

## ԳՈՒՏԷՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վ ա ճ ա ռ վ ո ւ մ ե ն

| | |
|---|---|
| «Զէյթունի ներկայէն եւ անցեալէն». . . . . . . . . . | 1 50 |
| «Բանաստեղծը, եւ հերոսը» փոխ. Տ. Ցովհաննիսեան. . . . . . . | — 25 |
| «Ֆրանս-պրուսական պատերազմը» Տ. Ցովհաննիսեան. . . . . . . | — 5 |

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ Гуттенбергъ. Г. Галустяну.

3—5

### Կօնֆեկտի եւ շօկօլադի գործարան

## „Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ“

### ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ցայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մ ր ց ո ւ մ ե ն Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։

Պատրաստում ենք՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (съ начинкою), մարմէլադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քիրվա-շաքար (պաղ-շաքար, леденецъ).

Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշգութեամբ։

Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։

Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բ ա յ ե ա ն դ ո ւ ր ե ա ն ի, Գ. Ս. Տ է ր-Ս ի մ օ ն ե ա ն ի, Զ. Ի. Ս ո ւ լ խ ա ն ե ա ն ի, Զ. Գ. Պ օ պ օ վ ի, Եղբ. Ս. Ի. Մ. Ա բ ր ա հ ա մ օ վ ն ե ր ի, Հ ա ջ ի-Ռ ա խ մ ա ն օ վ ի պարկական մագազինում, Պ ե տ ր օ ի իտալական մագազինում եւ այլն։ Տելեֆօն № 362։

47—100

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Іюля 1901 г.
Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.